Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Արգավանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերեն 2 ուսուցիչ / 28Ժամ /, գերմաներեն /20 ժամ/, մաթեմատիկա /15 ժամ / և հայոց լեզու և հայ գրականություն /6 ժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում, մեկ լուսանկար 3x4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ Օրենքի 26-րդ հեդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,
- Ինքնակենսագրություն,
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
- - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 25 -ից մինչև սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Անգլերենի մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 10–ին ժամը 15:00-ին, գերմաներենի մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 11 -ին ժամը 15:00-ին, հայոց լեզու և հայ գրականության մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 12 -ին ժամը 14:00-ին, մաթեմատիկայի մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 12-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի «Արգավանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

093 799 433 հեռախոսահամարով

Հասցե՝ Արմավիրի մարզ, գ. Արգավանդ, 1փ. 17շ.